ԹԵՄԱ 1 ԵՎՐՈՊԱ

ԴԱՍ 1.8. Կրկնություն

1. Ինչ հաջորդականությամբ են ուսումնասիրվում պետություններն ու տարածաշրջանները:
2. Քարտեզի վրա ցույց տվեք հասարակական աշխարհագրական տարածաշրջանները:
3. Ինչու՞ ենք Եվրոպայի տարբերությունը մյուս աշխարհամասերից համարում աշխարհագրական առանձնահատկություն:
4. Որո՞նք են Արևելյան Եվրոպայի բնակչության ցածր բնական աճի պատճառները: Ինչու՞ տարվող ժողովրդագրական քաղաքականությունը դեռ ցանկալի արդյունք չի տալիս:
5. Ձեր կարծիքով ինչո՞վ են պայմանավորված Արևելյան Եվրոպայի տարածքային և ազգամիջյան հիմնախնդիրները:
6. Որո՞նք են բնակչության համեմատաբար հավասարաչափ տեղաբաշխման պատճառները:
7. Թվեք տարածաշրջանում աճեցվող գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերը:
8. ՌԴ բնական ռեսուրսների յուրացման գործում ի՞նչ դժվարություններ կան:
9. Քաղաքական քարտեզով որոշեք, ԽՍՀՄ-ն էր շատ պետությունների սահմանակից, թե՞ Ռուսաստանի Դաշնությունը:
10. Թվեք և քարտեզի վրա ցույց տվեք ՌԴ տրանսպորտային խոշոր հանգույցները:
11. Ինչպիսի՞ն է ՌԴ արտաքին առևտրի կառուցվածքը:
12. Ներկայացրեք Արևելյան Եվրոպա տարածաշրջանի կազմը, գնահատեք նրա ՏԱԴ-ի և ՔԱԴ-ի դրական և բացասական կողմերը: